

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### **ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2015թվականին կատարված աշխատանքների մասին**

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190332.9 հա, այդ թվում վարելահող՝ 15955.1 հա, բազմամյա տնկարքեր՝ 1627.7 հա, խոտհարքեր՝ 5014.4 հա, արոտ՝ 92303.4 հա, այլ հողատեսքեր 75432.5հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 27 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 39 առաջարկություններ, որոնց միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով փոխանցվել են համապատասխան համայնք: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30 հուլիսի 1998 թվականի թիվ 479 որոշմամբ սահմանված 3-րդ կետի՝ Աղնջաձորի և Շատինի համայնքներում կատարվել են հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ:

ՀՀ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ 5 հողամասերի օտարման և 2 հողամասերի կառուցապատման առաջարկություն է ներկայացվել ՀՀՏԿ և արտակարգ իրավիճակների նախարարություն, որի վերաբերյալ ստացել ենք դրական եզրակացություն:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Գետափի,Ռինդի, Ազավնաձորի, Վերնաշենի, Արփիի, Գնդեվազի, Արինի և Ազատեկի համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրաժեռից՝ բարձրաժեռի՝ փոփոխության են ներկայացվել 233.26 հա ,որից փոփոխվել է

խաղողի այգի 104.8 հա, պտղատու այգի 128.46 հա, որը արտացոլվել է մարզի 2015թվականի հողային հաշվեկշռում: ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 15 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 74.243 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 9190466.85դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2015	13339.7	1425	29428.0	30254.7	102.8
2014	11070.68	1383	41426.67	61632.3	148.7

13369.67

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի- մարզային հողային պետական տեսչության պետ՝

Մ. Մեսրոպյան